

Տրամաբանական շեշտը անգլերենի գիտական հրապարակային խոսքում

*Խաչատրյան Ռուզան
Թորոսյան Լիանա*

Հանգուցային բառեր. ինքնաբերական խոսք, ասույթի շեշտ, տեմբր, լիհիմաստ բառեր, սպասարկու բառեր

Տրամաբանական շեշտը գիտական հրապարակային խոսքում հատուկ ուսումնասիրության կարիք ունի անգլերենն ուսումնասիրողների համար: Այս ուղղությամբ աշխատանքներ են տարվել Ս. Բաղդասարյանի, Մ. Մակարովայի, Վ. Վասիլևի, Օ'Կոնրի կողմից, որոնք վերծանել են անգլերենի տրամաբանական շեշտի առանձնահատկությունները և դրա յուրօրինակ դրսևորումները հրապարակային խոսքում: Սույն աշխատանքի նպատակն է ուշադրություն դարձնել անգլերենի և հայերենի ասույթի շեշտի և հրապարակային խոսքում դրա կիրառման որոշ առանձնահատկություններին: Հնդվածում հանգամանորեն քննարկվում են անգլերենի և հայերենի տրամաբանական շեշտի առանձնահատկությունները:

Ժամանակակից անգլերենում *ասույթի շեշտը* հիմնականում համահունչ երևույթ է, և այն պետք է տարբերել *բառային շեշտից*, որը ազդում է լեզվի թե՛ ուսուցման, թե՛ ուսումնասիրման գործընթացին: *Անգլերենի ասույթի շեշտը, ինչպես և հայերենում, ուժգնային է, քանի որ շեշտված վանկերը արտասանվում են ավելի մեծ ուժգնությամբ, քան անշեշտ վանկերը* [1, 10-104]: Մակայն պետք է նշել, որ անգլերենի շեշտը իր ուժգնության աստիճանով էպպես ավելի է տարբերվում հայերենից, քանի որ անգլերենի ասույթում շեշտված և անշեշտ վանկերը խիստ հակադրված են:

Ասույթի շեշտն արտահայտության ներսում բառերի ընդգծումն է: Անգլերենի իմաստաբանական խմբում (*syntagm or sense group*) կարևոր խոսքի մասերը կամ լիհիմաստ բառերը (*content words-nouns, verbs, adverbs, adjectives*) ավելի շատ են շեշտադրվում, քան նրանց շրջակա գործառույթ կատարողները կամ սպասարկու բառերը [1, 269] (*functional words-prepositions, articles, conjunctions, pronouns, prepositions*): Եթե անգլերենի ասույթում շեշտվում են սպասարկու բառերը, ապա հայերենում՝ մակբայները [2, 102-104]:

Անգլերենի հրապարակային խոսքի ճիշտ շեշտադրմանը հասնելու համար անգլերեն ուսումնասիրող հայ ուսանողներին անհրաժեշտ է՝

ա. համատեքստում հաղորդակցական կենտրոնը ճիշտ ընկալել (հաղորդակցական կենտրոնը ասույթի այն վանկն է կամ բառը, որն ավելի կարևոր իմաստ է արտահայտում) [1, 10-104].

Ինչպես օրինակ՝ I (and not another person) like it.

I *like* it. (I want to express my positive attitude toward the object as opposed to

dislike)

I like **it** (and not another object).

բ. տիրապետել ասույթի շեշտի ունկնդրման ինքնուրույն ուղղումներ կատարելուն,

1. An informal dialogue:

A: Hello Jane. 'How `are you?

B: 'Not ,bad, `thank you.

A: You `know, I 'saw `Ann ,yesterday.

B: 'Who?

A: `Ann. Was she in `Paris?

B: 'Paris?

A: She 'went there on a `business ,tour. She's 'coming to us to `morrow.

B: 'Call me when she ,comes ,will you?

A: 'All ,right. So ,long then.

B: 'See you ,later.

2. A formal dialogue:

A: Good ,morning.

B: Good ,morning. 'What's your ,name?

A: 'Jack ,Sutton.

B: 'Do you 'need a ,holiday job?

A: ,Yes, I ,do.

B: What can you ,do?

A: 'What can I do? I 'know 'foreign ,languages. I can 'speak French and ,German. I can 'play the ,piano.

B: And 'what about ,sport?

A: I can 'play ,tennis, ,chess and ,football.

B: ,Good.

A: I want to 'know what I shall ,do.

B: You'll 'probably work in a summer camp.

A: ,Thank you, I'll 'think it ,over and 'let you know. Good-,bye.

B: Good-,bye.

գ. աստիճանաբար զարգացնել շեշտադրման առանձնահատկության կիրառման կարողությունները:

Անգլերենի ասույթում բառերը շեշտվում են, որպեսզի նշեն խոսողի նկատառումը: Օրինակ՝ փոխելով ասույթի շեշտը, կարող ենք փոխել ասույթի իմաստը:

Հմնտ.

'He didn't pass the exam yesterday. (Somebody else did).

He 'didn't pass the exam yesterday. (He did not take it).

He didn't 'pass the exam yesterday. (He did something else with it).

He didn't pass 'the exam yesterday. (He passed a different one).

He didn't pass the exam yesterday. (He passed something else).

He didn't pass the exam yesterday. (He took it some other day).

1. Կարենը պատասխանե՛ց դասը:

2. Կարե՛նը պատասխանեց դասը:

3. Կարենը պատասխանեց դա՛սը:

Օտարալեզու բանավոր խոսքի զարգացման գործընթացում մեծ տեղ է հատկացվում թիրախային լեզվի հնչյունական փոփոխություններին: Հայախոս ուսանողները դժվարությամբ են հաղթահարում հնչյունական փոխներթափանցում առաջ բերող երևույթները: Կարևորվում է հատկապես անզլերեն բանավոր խոսքում հնչող արտահայտությունը ճիշտ հնչեքանգով արտաբերելը:

Ուսանողները դժվարությամբ են վերարտադրում նաև անզլերեն գիտական-հրապարակային խոսքին բնորոշ մեղեդայնությունը: Ինչպես նշում է Ե. Պ. Կարպինչենկովը. «Նույն արտահայտության վերարտադրման ժամանակ պատրաստված և հանպատրաստից խոսքի պայմաններում մեղեդային կոնտուրները կամ կադապարները տարբեր են լինում» [5, 251]: Խնդիրն այն է, որ անգամ ուսուցման ավարտական փուլում ուսանողները դժվարություններ ունեն անզլերեն մեղեդային կադապարները վերարտադրելու առումով:

Նույնը վերաբերում է նախադասության շեշտին, որը մեծ դեր է կատարում հատկապես երկխոսության իմաստը հասկանալու գործընթացում: Դրա միջոցով խոսողները հիմնականում առանձնացնում են ռեման, այսինքն՝ արտահայտության բուն տեղեկատվությունը: Միայն համապատասխան վարժանքով հնարավոր է յուրացնել թիրախային նախադասության շեշտը, կիրառել այն ժամանակին, ճիշտ, որը բնորոշ է լեզվակրին:

Հատկանշական է այն, որ օտար լեզուների ֆակուլտետներում նախադասության շեշտը հիմնականում ուսուցանվում է տեսական հնչյունաբանության դասընթացում: Անզլերենի ուսուցման գործնական ժամերին ոչ բոլոր դասախոսներն են այդ հարցում հետևողական:

Անզլերենի ուսուցման *նախնական և միջին փուլերում* ունկնդրում կազմակերպելու դժվարություններից մեկն էլ այն է, որ ուսանողները լավ չեն ընկալում ունկնդրածը: Դրա պատճառներից մեկը հանպատրաստից խոսքի արագությունն է: Օտար լեզու ունկնդրող ուսանողները պահանջում են, որ ունկնդրվող խոսքը լինի ավելի դանդաղ: Այն փաստը, որ օտարալեզու խոսքն ավելի արագ է թվում լսողին, փաստում է այն մասին, որ ուսանողները չունեն ընկալելու համապատասխան հմտություններ. նրանց հնչյունային գիտակցությունը լավ զարգացած չէ:

Ըստ Բադդասարյանի՝ անզլերեում ասույթի շեշտը տարանջատվում է երեք հիմնական խմբերի [1, 10-104]՝

1. *Նորմալ-Normal (or syntactical) sentence-stress,*

օրինակ՝ He is ↓ a very good ,person. He is→ quite a good ,person.

If→ the work is ready I'll ,control it.

→If it is ,ready I'll control it.

2. Տրամաբանական-Logical sentence-stress,

օրինակ՝ ↓Jack is 'listening to music , today.

↓Jack is 'listening to , music today.

→Jack is , listening to music today.

Jack was ,listening to music , yesterday.

3. Հուզական-արտահայտչական-Emphatic sentence-stress,

օրինակ՝ They were de'lighted to see dear ,Jone after this 'long 'long ,time.

Ինչ վերաբերում է հայերենին, ապա, ըստ Ջահուկյանի, հայերենում ասույթի շեշտը կայուն է, այն փոխում է իր դիրքը, երբ ավելանում են վերջածանցներ, կամ բարդ ածանցավոր բառեր են ստեղծվում համատեքստում, ապա այս դեպքում ասույթի շեշտը ընկնում է վերջին վանկի վրա:

Ինչպես օրինակ՝ *Դասարա՛նք* պետք է մաքրեք այսօր, այլ ոչ թե բակը:

Դասարանայի՛ն աշխատանք պետք է դուք կատարեք, այլ ոչ թե տնային:

Հրապարակային խոսքում ձայներանգը կարող է լինել զգացմունքային և ոչ զգացմունքային, որն էլ իր հերթին կարող է արտահայտել ոչ միայն զգացմունքները, այլև ասույթի՝ խոսակցի նկատմամբ խոսողի արտահայտած վերաբերմունքը, նրա սեփական կարծիքը, ապրումները: Ասույթի ձայներանգով կարելի է զգալ խոսողի զգացմունքը, արդյոք այն արտահայտում է վստահություն, անվստահություն, կասկած, ինքնավստահություն և այլն: Գիտական-հրապարակային խոսքի ուսուցումը պահանջում է ինքնաբերական խոսքի ու տեմպի, ռիթմի կիրառման հմտություններ և կարողություններ: Խոսակցական խոսքում խոսքի տեմպը հանգեցնում է արտաբերական կոմպրեսիայի կամ փոխակարգման [8, 178]: Դրա պատճառները տարբեր են՝ խոսողի հուզական վիճակը, դիտավորությունները, խոսքի նպատակը, ընդհանրապես խոսքի գործաբանական ենթատեքստը:

Գիտական-հրապարակային բանավոր խոսքի ուսուցման դժվարություններինց մեկը ձայնի ճիշտ տոն և բարձրություն ընտրելն է: Հատկապես հրապարակային խոսքի դեպքում դժվար է որոշել, թե որ տոնն է արդյունավետ, քանի որ «ցածր ձայնով խոսելը համարվում է գեղագիտական նորմ, իսկ բարձր ձայնով խոսելը դաստիարակված չլինելու նշան է» [7, 44-51]:

Դժվարություն է ներկայացնում նաև ֆրազային կամ նախադասության շեշտի ճիշտ ընկալումը և վերարտադրումը, քանի որ ուսանողները պետք է կարողանան որոշել «հաղորդակցական կշիռ ունեցող արտահայտության կենտրոնը, այսինքն՝ ռեման կամ ասույթը, որը ասույթային միավորի ընդհանրացված անվանումն է» [3, 397]:

Գիտական-հրապարակային բանավոր խոսքի կարևոր բաղադրիչ է խոսքի ձայներանգը կամ տեմպը: Ինչպես հայտնի է, այն մեկուսացված չէ: Անզլերենում, ինչպես նշում է Կրետիսինյան, այն հայտնի է մի շարք եզրույթներով՝ **“creaky voice, low pitch, husky voice/low pitch, breathy voice/slow tempo”** [5, 251]:

Հետաքրքիր է այն, որ ձայներանգները խոսակցական խոսքում հույզ ու զգացմունք չեն արտահայտում, սակայն ունեն հարանշանակային երանգավորում: Մյուս կողմից՝ այն ունի գործաբանական-հանրալեզվաբանական կշիռ, քա-

նի որ ցույց է տալիս շփվողների, հաղորդակցվողների կարգավիճակը, տարիքը, արժեքային համակարգը, մշակութային պատկանելությունը: Մեծ դժվարություն է ներկայացնում նաև օտարալեզու խոսքի տատանումների, դադարների, լրացնող և չլրացնող նշույթների ուսուցումը, երբ ուսանողները ձեռք են բերում առանց դադարի խոսքի հոդաբաշխման, տատանվող դադարների, դադարները լրացնելու կարողություններ և հմտություններ:

Նրանք պետք է կարողանան նախադասության տարբեր հատվածներում դադարեցնել և արագացնել իրենց խոսքի տեմպը, արտահայտվել բարձր կամ ցածր ձայնով և ըստ ձայներանգի որոշել հաղորդակցվողների զգայական-հոգեբանական վիճակները, ստեղծել համապատասխան տրամադրություն, զգայական վիճակ:

Ինչպես նշում է Գ. Վ. Կրետինինան. «Հնչարտաբերական, հնչյունաբանական մակարդակում հաղորդակցման կամ շփման միջոցների ուսուցումը հնարավոր չէ իրականացնել առանց ոչ խոսքային միջոցների ուսուցման, քանի որ առօրյա խոսքին բնորոշ ամեն մի շեշտի, հնչերանգի, ձայներանգի, առոգանական փոփոխությունների, դադարի և տատանման համապատասխանում է որոշակի ժեստ, դիմախաղ, մարմնի շարժում: Այստեղ կարևոր է հստակեցնել, թե լեզվաբանական գիտելիքները ուսուցման որ փուլում, ինչ ընթացակարգերով են ուսուցանվում, քանի որ խոսքային հմտությունները միշտ չէ, որ հիմնվում են որոշակի գիտելիքների վրա: Ավելին՝ լեզվակիրները ընդհանրապես դրա կարիքը չունեն» [5, 251]:

Ասույթի արտասանության արագության միջոցով հրապարակային խոսքում կարելի է արտահայտել բացասական և դրական զգացմունքներ: Այն կարող է ընդգծել նաև ասույթի որևէ կարևոր հատվածը ընդգծելու պատճառով: Ասույթի արտասանության արագությունը հրապարակային խոսքում արտահայտվում է արագ, միջին, դանդաղ կամ համաչափ, անհամաչափ: Այսպիսով, ասույթի արագության փոփոխությունը խոսքի արտահայտչական միջոցներից մեկն է:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ խոսքի տեմպի և օտարալեզու խոսքի ընկալման գործընթացները փոփոխական մեծություն ունեն: Ընդհանուր առմամբ խոսքի տեմպի վրա ազդում են տարբեր գործոններ՝ ներլեզվական, արտալեզվական, հանրամշակութային և այլն: Առոգանական միջոցների օգտագործումը հարալեզվական է՝ չնայած լեզվի հնչյունաբանական կանոնավոր համակարգից դուրս է: Դրանց կիրառման ընթացքում կարևոր դեր են խաղում հնչյունների երկարությունը, տևողությունն ու շեշտը, օրինակ՝

- ձայնի որակը (կոպիտ, հեղուկ, ականց ծակող և այլն),
- ձայնի բարձրությունը (ճչոց, նվնվոց, փնթփնթոց),
- ձայնի ուժը (շնչոց, մրթմրթոց, գոռոց, և այլն),
- երկարությունը (օրինակ. «Շա՛ -ա՛ -ա տ լավ է»):

Հաճախ հարալեզվական արդյունքի հնարավոր է հասնել ձայնի բարձրության, երկարության, ձայնի ուժի և որակի համակցությամբ» (Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ., 2005, 103):

Հետազոտողներն առանձնացնում են ժեստերի հետևյալ գործառույթները՝

կրկնության կամ ակտուալ խոսքային տեղեկատվության կրկնապատկումը/մատուցում, աչքերով, գլխով ցույց տալը/, խոսքային արտահայտության փոխարինումը /գլխով անելը, մատը շուրթերին տանելը. «լռի՛ր, ոչ մի խոսք», իմաստային առումով խոսքի լրացումը/մատով սպառնալը՝ դե՛ կտեսնես/, խոսքային շփման կարգավորման դերը կամ խոսքը շարունակելու միջոցները, այսինքն՝ ֆատիկ կամ խոսքարկման գործառույթը/պարբերաբար կրնկնելով շփման որևէ մասնակցի գլխի շարժումը: Նշվում է նաև, որ ժեստերը կարող են հակասել խոսքային արտահայտությանը [6, 256]:

Այսպիսով, անգլերենի հրապարակային խոսքում ասույթի շեշտը իր ուրույն դերակատարումն ունի, քանի որ հրապարակային խոսքին բնորոշ են ասույթի շեշտի տարբեր դրսևորումներ: Կարևոր է նշել հրապարակային խոսքում տրամաբանական շեշտի կիրառման առավելությունը, քանի որ ձայներանգը հուզականորեն հագեցած է: Հրապարակային խոսքի տեմպի և ռիթմի փոփոխությունները պայմանավորված են խոսակցի հուզական վիճակից: Ակներն է, որ անկախ հաղորդակցման ձևից և հուզական բնույթից՝ ցանկացած խոսք պետք է ընկալելի լինի, քանի որ հրապարակային խոսքը հաճախ ուղեկցվում է ոչ միայն զգացմունքային արտահայտման միջոցով, այլև դիմաշարժամբ, ժեստերով և խոսքի արտալեզվական միջոցներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բաղդասարյան Ա.Ա., Ժամանակակից անգլերեն գրական արտասանություն, Երևան, 2006:
2. Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Բաղաձայնների արտաբերական բնութագիրը, Երևան, 1980:
3. Նազարյան Ա.Ա., Բաղդասարյան Ռ.Գ., Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ, Ամարաս, Երևան, 2000:
4. Карпиченкова Е.П., Интонационные особенности диалогической речи в зависимости от прагматической установки // Вопросы фонетической организации устных текстов (Вып. 344). М., 1989.
5. Кретинина Г.В., Методика обучения студентов филологических факультетов иноязычной спонтанной речи: (англ. яз. как доп. специальность): дис. ... канд. пед. наук / Кретинина Г.В.; Тамб . воен. авиац. инженер. ин-т. – Тамбов, 2002.
6. Григорьева С.А., Григорьев Н.В., Крейдлин Г.Е. Словарь языка русских жестов. Москва-Вена: ЯРК; Венский славистич. альманах, 2001.
7. Тонконогов В.Г., Шевченко, Т.Н. Социальная вариативность тембра в спонтанной речи II Проблема спонтанной разговорной речи (МГИИЯ). Вып. 332. М., 1989.
8. Brown G., Listening to spoken English . – Longman, 1990.

Логическое ударение научно-публицистической речи английского языка

*Хачатрян Рузан
Торосян Лиана*

Резюме

Ключевые слова: спонтанная речь, ударение предложения, тембр, полнозначные слова, функциональные слова

Цель этой работы – обратить внимание на некоторые особенности ударения предложения в английском и армянском, а также их употребление в научно-публицистической речи. В статье рассматриваются особенности логического ударения в английском и армянском. Роль ударения в научно-публицистической речи со всеми своими проявлениями уникальна. Преимущества применения логического ударения в научно-публицистической речи сочетаются с изменениями темпа и ритма речи. В публичной речи может быть эмоциональным, что, в свою очередь, может выражать не только эмоции, но и точку зрения оратора, его собственное мнение, чувства. Голос речи может передать чувства оратора, выражать уверенность, недоверие, сомнение, уверенность в себе. Научно-публицистическая речь требует спонтанности, ритмических навыков и способностей. Еще одной трудностью в преподавании научно-публицистической речи является восприятие правильной интонации.

Logical Stress in English Scientific-Public Speech

*Khachatryan Ruzan
Torosyan Liana*

Summary

Key words: spontaneous speech, word accent, timbre, content (full) words, function words.

The purpose of this work is to pay attention to some peculiarities of sentence stress in English and Armenian and its use in public speech. The article analyzes the peculiarities of English and Armenian logical stress.

The unique role of sentence stress is revealed in scientific-public speech with its different manifestations. A great attention is paid to the advantages of applying logical stress in scientific-public speech, which is connected with the changes of the rhythm and pause. In a public speech, the voice can be emotional, which in its turn can express not only emotions, but also the speaker's point of view, his own opinion and his feelings. The voice can convey the speaker's feelings, whether it expresses confidence, distrust, doubt, self-confidence. Teaching science-public speech requires spontaneous speech and pause, rhythmic skills and abilities.

Moreover, the article discusses the perception of the correct tone of voice, which is also one of the difficulties in teaching scientific-public speech.